10.57192/18291864-2023.4-168

Արտաշես Ռ. Մարտիրոսյան
Բանասիր. գիտ. թեկնածու

«ԱՆՁԸ ՊԱՀՊԱՆԵԼ/ՊԱՇՏՊԱՆԵԼ» ԲԱՌԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՆԹԱԲԱԶՄՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ*

Բանալի բառեր – բառի իմաստային կառուցվածք, աստիճանակարգային փոփոխություններ, միջուկային իմաստույթ, ծայրամասային իմաստույթ, բառաիմաստային ենթաբազմություն, ճանաչողական-իմաստաբանական մեխանիզմ, բառային կազմի որակական տեղաշարժ, բառույթ, բառարանագրական մշակում, լեզվի գոյավիճակ:

Մուտք

Հայերենի բառապաշարի պատմական շերտերի ուսումնասիրությունը փաստում է, որ հատկապես հինհայերենյան շրջանում բառապաշարի ռազմագիտական տերմինաբանության շերտը ձևավորվել է իրանյան փոխառություններից: Ըստ Հ. Աճառյանի՝ «.... նախահայերենը չուներ պատերազմական արվեստի, զենքերի և պետական կազմակերպության վերաբերյալ բառեր, ... որոնք ավելի հետո պիտի փոխ առնվեին իրանյաններից կամ այլ ազգերից.... Հայոց բնիկ զենքերի անուններն են *թուր, նետ* և *ալար*, որոնք հնդեվրոպական ծագում ունեին, մնացյալը մեծ մասամբ պարսկերեն է»[1]: Իսկ իր ռազմական բառարանի առաջաբանում Մ. Աբեղյանը հավելում է. «Բայց և այնպես դարերից ի վեր ռազմական կյանքով ապրած չլինելով՝ մեր լեզուն

* Հոդվածն ընդունվել է տպագրության 14.09.2023:

1 **Աճառյան Հ. Հ.**, Հայոց լեզվի պատմություն, հատ. 1, Ցեր., Պետական համալսարանի հրատ., 1940, էջ 125, 296: Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս նաև **Մարտիրոսյան Ա. Ռ.**, Հայերենի ռազմագիտական տերմինաբանության ձևավորման պատմությունից, «Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ ռազմագիտական հանդես), Եր., 2001, N 1-2, էջ 173-176, N 3, էջ 86-92:

մնացել է այս նկատմամբ ընդհանրապես նախնական դրության մեջ, շատ քիչ են առաջ յեկել ռազմական նոր բառեր և դարձվածքներ, վորոնք և, ըստ հնարավորության, մտել են այս բառարանի մեջ.... և վոր գլխավորն է՝ հին բառերը գործածված են նոր նշանակությամբ ևս.... Կուլտուրայի փոխվելու հետ, բնականաբար վոչ միայն նոր ոտար բառեր պիտի մտնեն մեր լեզվի մեջ, այլև մեր բառերի նշանակություններն ևս պետք է ընդարձակվեն նոր առումներով»[2]:

Լեզուն, որպես կանոն, իր զարգացման տարբեր գոյավիճակներում ձգտում է առավելագույն համարժեքություն ստեղծելու բառապաշարի և հասկացական աշխարհի միջև: Հաճախ դա կատարվում է ոչ թե նոր՝ *արմատական* բառերի ստեղծմամբ, այլ «հներին» նոր իմաստներ հաղորդելու ճանապարհով: Այս դեպքում գործում է հին և զարգացած լեզուներին բնորոշ *ներքին խնայողության ռեժիմը*. հակառակ պարագայում լեզվի բառային կազմը կծանրաբեռնվեր անթիվ-անհամար առանձին բառերով, եթե ամեն մի առարկայի կամ հասկացության համար մի նոր բառ ստեղծվեր: Կյանքը՝ հասկացական աշխարհը, թելադրում է *նոր բառեր* ստեղծել նոր իրողությունների համար կամ *հին բառերով* արտահայտել նոր իմաստներ: Արդեն նշեցինք, որ վերջինն ավելի հաճախադեպ է, ուստի մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում քննել բառի ներքին՝ իմաստային կառուցվածքի տեղաշարժերը, տարաժամանակյա կտրվածքում վեր հանել այն սոցիալ-պատմական նախադրյալները, որոնք բառույթի իմաստային կառուցվածքում հարուցում են աստիճանակարգային փոփոխություններ՝ տեղաշարժեր միջուկային և ծայրամասային իմաստույթների միջև: Վերջինները գտնվում են շարունակական զարգացման մեջ՝ օժտված բարձր աստիճանի կայունությամբ, ասել է թե՝ լեզվի բառային կազմում հնուց ի վեր գործառում են նրա հիմնական բառաիմաստային դաշտերը՝ իրենց ենթաբազմություններով, բառաիմաստային խմբերով (միկրոհամակարգերով): Եվ ահա լեզվի զարգացման տարբեր գոյավիճակներում փոփոխվում է ոչ թե բառաիմաստային դաշտ-համակարգը, այլ դրա ներսում առկա որոշ հատվածներ և հարաբերությունները դրանց միջև, որովհետև դաշտի ցանկացած անդամ բազում իմաստային

---

2 **Աբեղյան Մ. Խ.**, Ռուս-հայերեն ռազմական բառարան, Յեր., Կովկ. Կ. Բ. Ռազմա.-Հեղ. Խ.-ին կից Հայկ. Խմբագր. - Հրատ. Կոլլեգիա, 1925, էջ 5-6:

թելերով՝ հարաբերություններով, կապված է ողջ համակարգում գործառող մյուս անդամների հետ: Վերջինիս ամեն մի փոփոխություն հանգեցնում է լեզվի բառային կազմի որակական տեղաշարժի:

Այս համատեքստում մենք քննության առարկա ենք դարձնելու «Անձ, մարդ» բառաիմաստային դաշտում գործառող «*անձը պահպանել/պաշտպանել*» բառաիմաստային ենթաբազմության բառույթների իմաստային կառուցվածքների զարգացման բառարանագրական մշակումները ժամանակագրական կարգով՝ հինհայերենյան շրջանից մինչև մեր օրերը, ի հայտ ենք բերելու բառույթների՝ պատմական այդ հսկայական ժամանակահատվածում կրած իմաստափոխությունների ճանաչողական-իմաստաբանական մեխանիզմները, **այլ** բառաիմաստային խմբերի հետ հարաբերվելը: Հայտնի փաստ է, որ արդեն կես դար է՝ չկա արդի հայերենի լիակատար բացատրական բառարան, և նորագույն շրջանի իմաստային տեղաշարժերը փաստող իրողությունների համար չկան բառարանային համապատասխան վկայություններ, հանգամանք, որն ասես ընդհատում է հայերենի հին-նորագույն շրջանների բառապաշարում իմաստափոխական իրողությունների դիտարկման ընթացքը: Այս առումով հայերենի՝ ավելի քան 1500-ամյա ընթացքն արտացոլող դեռևս չգերազանցված բառարանը եղել և մնում է Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանը» (անշուշտ՝ Հայկազյանից հետո), որում լավագույնս արտացոլված են պատմական տվյալ շրջափուլի դրությամբ բառի իմաստային կառուցվածքի նախընթաց փոփոխությունները, հավելյալ կերպով՝ նաև ծագումնաբանությունը, բառապաշարի այս կամ այն շերտին պատկանելը, և ամենակարևորը՝ կենդանի խոսքում նրա իրացումը: Բառարանագրական մշակումները ներկայացնելիս մինչև խորհրդային շրջան (1920) առաջնորդվել ենք առավելապես Մալխասյանցի բառարանով, սակայն գիտական պատշաճությունը պահպանելու մղումով հղել ենք նաև արևմտահայ իրականության մեջ հրատարակված այն բառարանները, որոնցում քննվող բառույթի իմաստային կառուցվածքում առկա է նոր իմաստույթ՝ հիմնավորված կենդանի խոսքային իրացումներով[3]:

---

3 Ի դեպ, միջինհայերենյան վկայությունները դուրս են մնացել մեր քննությունից, որովհետև միջին հայերենի միակ լիակատար բառարանում (տե՛ս **Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.**, Միջին հայերենի բառարան (այսուհետ՝ ՄՀԲ), Եր., ԵՊՀ հրատ., 2009) ներկայացված է զուտ XII–XVI դդ. բառամթերքը, որը ձևաիմաստային առումով

Այսպիսով, երբ ուսումնասիրում ենք «*անձը պահպանել/պաշտպանել*» բառաիմաստային ենթաբազմության բառույթների բառարանագրական մշակումները հինհայերենյան շրջանից մինչև մեր օրերը, տեսնում ենք, որ հինհայերենյան շրջանը բավական հարուստ է եղել նշված ենթաբազմության բառային արտահայտություններով, երբ **անձ**, **գլուխ**, **թիկունք**, **մարմին**, **շուրջ** սերող հիմքերով և -**պահ**/-**պաշտ**/-**պան** արմատական ու ածանցական ձևույթներով կազմվել են համապատասխանաբար *անձնապահ(-ապան), գլխապահ, թիկնապահ, մարմնապահ, շրջապահ, փուշտիպան* բառույթները՝ «թիկնապահ» միջուկային գերիմաստույթով[4]:

Այսպես.

1. ԹԻԿՆԱՊԱՀ

- Հինհայերենյան շրջանում իրացրել է ածական-գոյականի՝ «թիկունքը և թագավորի անձը պահպանող», միջուկային իմաստույթ (հմմտ. «ա., գ. Պահպանիչ թիկանց կամ ի թիկանց. պահապան անձին թագաւորի՝ ի պատերազմի կամ ի պալատան [*Թիկնապահս իւր (կարգէ) զհնու հանդերձ ի զաւակացն խոռայ, Խոր.*], Եւ Զէն պահպանակ թիկանց. Ի թիկնապահ և լանջապահ պղնձի տախտակացն»[5], հմմտ.

բնորոշ չէ գրաբարին, ուստիև չի արտացոլում բառույթի իմաստային զարգացման գրաբար-միջին հայերեն ընթացքը:

4 Մի միջանկյալ նկատառում. մենք պարզեցինք, որ «Գրաբարի հոմանիշների բառարանում» **թիկնապահ** բառույթի հոմանիշային շարքի 1-ին՝ գոյականական իմաստը ներկայացված է 3 անդամով (հմմտ. «ա. գ. 1. Անձնապահ, պաշտպան, համհարզ: 2. Պահպանակ (թիկունքը պաշտպանող զրահ)» (**Ղազարեան Ռ. Ս.**, Գրաբարի հոմանիշների բառարան (այսուհետ՝ ԳՀԲ), Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 2006, էջ 289)), մինչդեռ մեր ուսումնասիրություններով գրաբարում դրանց թիվը հասել է մեկ տասնյակի, որոնք վկայված են նաև հոմանիշների՝ խորհրդային շրջանի երկու համահավաք բառարաններում (հմմտ. «գ. 1. Համհարզ [զինվորական], անձնապահ, գլխապահ, (հնց.) մարմնապահ, շրջապահ, անձնապահապետ, փուշտիպան, փշտիպան, փշտիպահ, պրոտեքտորոս: 2. Պաշտպան» (**Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետ՝ ՀԼՀԲ), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 222), «գ. 1. Համհարզ (որևէ բարձրաստիճան անձի պաշտպանությունն ապահովող զինվորական): 2. Անձնապահ, անձնապահապան, գլխապահ, գավազ (հզվդ.) (որևէ մեկին պաշտպանող և մշտապես ուղեկցող մարդ): 3. Տե՛ս **Պաշտպան**» (**Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (այսուհետ՝ ՀԼՀԲԲ), Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 342)):

5 **Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիւրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետ՝ ՆՀԲ), Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836, էջ 811:

նաև՝ «ա., գ. 1. պահապան թագաւորի, թագաւորի կռնակը՝ քովը կեցող զինուոր: 2. զէնք կռնակը պահելու»[6]):

- Ուշագրավ է, որ նույն՝ Հայկազյանին ժամանակակից հայ-իտալերեն բառարանում ածականի միջուկային իմաստույթը մղվել է ծայրամաս (հմմտ. «գ. պահպանիչ թիկանց կ[ա]մ ի թիկանց, պահապան անձին իշխանավորի՝ ի պատերազմի կ[ա]մ ի պալատան.... գ. Ջրահ թիկանց.... և ա. Պահպանակ թիկանց: – պղնձի տախտակ....»[7]):
- Խորհրդային շրջանի վկայություններում ածական-գոյականի միջուկային իմաստույթը վերականգնվել է, իսկ «թիկունքի զրահ» ծայրամասային իմաստույթը՝ դիտվել *հնացած* (հմմտ. «ած., գ. 1. Թիկունքը կ[ա]մ թիկունքից պահպանող. զինուո-րական, որ պաշտպանում է բարձրաստիճան մարդու անձը [*Թիկնապահ զինուոր: Թիկնապահ գունդ*....]: 2. (հնց.) Թիկուն-քի պաշտպանութեան զրահ»[8]):

Խորհրդային ավելի նոր շրջանի վկայություններում բառույթի իմաստային կառուցվածքն ընդլայնվել է գոյականի արժեքով «բարձ-րաստիճան անձին պահպանող» հինհայերենյան միջուկային իմաս-տույթով և ծայրամասային իմաստույթների ընդլայնմամբ (հմմտ. «գ. 1. Զինվոր, որ պաշտպանում է բարձրաստիճան անձի (միապետի, հրա-մանատարի, իշխանի և այլնի) կյանքը. համհարզ [*Առաջին կանգնած էին հերն ու քույրերը, իսկ չորս կողմը ծունկի եկած պալատական թիկ-*

---

6 **Հայր Մկրտիչ Աւգերեան, Հայր Գրիգոր Ճէլալեան**, Առձեռն բառարան հայկազ-նեան լեզուի (այսուհետ՝ ԱԲՀԼ), Վենետիկ, Սուրբ Ղազար, 1865, էջ 326:

7 **Հայր Մանուէլ վարդապետ Ջախջախեան**, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական (այսուհետ՝ ԲԲՀԻ), Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1837, էջ 573:

8 **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան (այսուհետ՝ ՀԲԲ), Եր., ՀՍՍՌ պետական հրատ., 1944, էջ 107: Ուշագրավ է, որ արևմտահայ աշխարհաբարի՝ խորհրդային շրջանի ընդգրկուն բառարանների վկայությունները գրեթե պահպանել են բառույթի հինհայերենյան իմաստային կառուցվածքը՝ ծայրամասային իմաստույթ-ների հոմանիշ-հականիշ վկայաբերումներով (հմմտ. «գ. արքայի-, անձնապահ, զօ-րավարի-, համհարզ» (**Գայայեան Յովհ. Թ.**, Բառարան գանձարան հայերէն լեզուի (այսուհետ՝ ԲԳՀԼ), Գահիրէ, «Գալֆա», 1938, էջ 150), հմմտ. նաև՝ «ած. գ. 1. թիկունքը՝ կռնակը պահպանող՝ պաշտպանող. 2. անձնապահ՝ բարձրաստիճան մարդու (Ֆրնս. garde-de-corps), զօրավարի՝ համհարզ (Ֆրնս. aide de camp). 3. յետսապահ՝ վերջապահ՝ գունդ (Ֆրնս. arrière-garde), որ բանակին կռնակը կը պաշտպանէ (Հկնշ. յառաջապահ, Ֆրնս. avant-garde, avant-poste)» (**Գնել արք. Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան, Արտ. Տէր Խաչատուրեան**, Հայոց լեզուի նոր բառարան (այսուհետ՝ ՀՆԲ), հատ. 1, Պէյրութ, 1992, էջ 689)):

նապահները (ՀԹ)]: 2. Ընդհանրապես որևէ մեկին պաշտպանող՝ նրան ուղեկցող անձ: 3. փխբ. Հետախուզության աշխատակից, որ մշտապես հետևում է մեկին [10 *րոպե էլ չէր անցել, երբ մաքսանենգը թիկնապահի ուղեկցությամբ երևաց* (Թարգմ.)]: 4. ա. Բարձրաստիճան անձի կյանքը պահպանող [*Թագավորը ժամանում է... թիկնապահ գնդով* (ՍՔ)]: 5. գ., փխբ. Որևէ անձի ենթակա՝ կամակատար՝ գործակից [*Խաչոն ու թիկնապահները օրվա կեսը... ուտում ու խմում էին (ԱՍ)*]»[9], «գ. 1. Որևէ բարձրաստիճան անձի (թագավորի, զորավարի ևն) պաշտպանությունն ապահովող զինվորական: 2. Ընդհանրապես՝ որևէ մեկին պաշտպանող և մշտապես ուղեկցող մարդ: 3. Տե՛ս Թիկնապանակ[10]: 4. (ծծկբ.) Հետախուզության կամ հակահետախուզության աշխատող, որ մշտապես հետևում է մեկին: [*Տասը րոպե էլ չէր անցել, երբ (մաքսանենգը) «թիկնապահի» ուղեկցությամբ երևաց* (Կ. Միխալ)]: 5. ածծ. Պաշտպանող, մեկի պաշտպանությունն ապահովող: [*Թ. զորք*]» (հմմտ. ԱՀԲԲ, էջ 443, տե՛ս և հմմտ. նաև ՆԲՀԼ[11], էջ 522, ՀԼՆԲ[12], էջ 186)): Այստեղ հարկ է հավելել, որ արդի ընկալմամբ ծայրամասային-ներում կատարվել են որոշ ճշգրտումներ, մասնավորապես՝ չեզոքացվել են ԺՀԼԲԲ-ի 2-րդ, 3-րդ (հմմտ. նաև ԱՀԲԲ-ի 4-րդ) նշանակությունները: Այսօր բառույթն ապատերմինացվել է՝ ոճական նշույթավորմամբ իրացնելով նաև «ընդհանրապես պետական բարձրաստիճան անձի կամ առավելապես հանրության կողմից մերժելի խավի՝ օլիգարխների թիկնազորի անդամ, պաշտպան» միջուկային իմաստույթ՝ բացասական երանգավորմամբ:

- *Թիկնապահ-* սերող հիմքով բաղադրություններ հինհայերենյան շրջանում չեն վկայվում. դրանք հանդիպում են միայն խորհրդային շրջանի վկայություններում, ինչպես՝ *թիկնապա-*

9 Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետ՝ ԺՀԼԲԲ), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 202:

10 Ի դեպ, *թիկնապանակ* բառույթը, որ նշված բառարանում ներկայացվում է որպես *թիկնապահ*-ի հոմանիշ՝ *պարմաքառ* նշումով, հին ու նոր և ոչ մի բառարանում վկայված չէ (հմմտ. «գ. (պատմ.) Թիկունքը՝ մեջքը պաշտպանող զրահ». տե՛ս և հմմտ. **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետ՝ ԱՀԲԲ), հատ. 1, Եր., 1976, էջ 443, հմմտ. նաև ԺՀԼԲԲ, հատ. 2, էջ 202):

11 **Գաբամաճեան Ս.**, Նոր բառգիրք հայերէն լեզուի (այսուհետ՝ ՆԲՀԼ), Կ. Պոլիս, Տպագրութիւն Ռ. Սագայեան, 1910:

12 **Տէր Խաչատուրեան Ա., Գանգրունի Հ., Տօնիկեան Փ.**, Հայոց լեզուի նոր բառարան (այսուհետ՝ ՀԼՆԲ), Պէյրութ, Կ. Տօնիկեան եւ որդիք հրատարակչատուն, 1968:

հական, *թիկն(-ապահ)ապետ*, *թիկնապահություն*, *թիկնապահել*, *թիկն-* սերող հիմքով՝ *թիկնազոր(ք)*[13]:

2. ԱՆՁՆԱՊԱՀ

- Հին հայերենում իրացրել է գոյականի արժեքով «թագավորի, որևէ մեծավորի թիկնապահ» միջուկային և ածականի արժեքով «զգուշավոր» ծայրամասային իմաստույթները (հմմտ. «գ. Պահապան անձին կամ մարմնոյ թագաւորի. թիկնապահ, Ուր իցէ զգուշութիւն անձին իւրոյ [*Վասն անձնապահ լոութեան*]» (ՆՀԲ, հատ. 1, էջ 194), «ա. 1. մեծի մը քով պահապան: 2. իր անձը պահող, զգուշաւոր» (ԱԲՀԼ, էջ 74)), նաև հանդես եկել *անձնապահ լինել* կայուն հարադրությամբ (հմմտ. «Պահել զանձն իւր. զգոյշ լինել. խորշել. *սազընմազ. Յորմէ և դու անձնապա՛հ լինիջիր*» (ՆՀԲ, հատ. 1, էջ 194))[14]:
- Հետագա վկայություններում կայունացել է ածականական «զգուշավոր» ծայրամասային իմաստույթը՝ որպես միջուկային («ած. 1. Ինքն իրան պահող՝ պահպանող. զգոյշ, ձեռնպահ»: *Նա ոչ մի ....*

13 Ի դեպ, բառարանագրական վերջին վկայություններում բառույթը ներկայացվում է *հնացած*՝ որպես պատմաբառ կամ գրքային բառապաշարի բառ՝ «թիկնապահ զորք» իմաստույթով (տե՛ս ԱՀԲԲ, էջ 443, տե՛ս նաև ՀԼՀԲԲ, էջ 342) (հմմտ. նաև՝ ***անձնապահազոր*** [գ. Անձնական թիկնազոր] (ԺՀԼԲԲ, հատ. 1, էջ 116), [գ. (գրք.) *Թիկնապահ զորք*] (ԱՀԲԲ, հատ. 1, էջ 69)): Հավելենք, որ *թիկնազոր* բառույթն այսօր իմաստի թարմացում է ապրել և ակտիվորեն գործառում է «թիկնապահների/թիկնապահական խումբ» իմաստույթով:

14 Հին հայերենում *անձնապահ-* սերող հիմքով վկայվել է **անձնապահապետ** բառույթը, որն իրացրել է գոյականի արժեքով «թիկնապահների գլխավոր» միջուկային և «իր անձի նկատմամբ զգուշավոր, ինքնագլուխ» ծայրամասային իմաստույթները (հմմտ. «գ. (իբր մարմնապահապետ). Գլուխ անձնապահաց կամ թիկնապահաց.... Եւ որպէս խնամակալ անձին իւրում ևեթ. ինքնատէր. ինքնագլուխ [*Եւ ինքեանք ցրուեալք փիրագլուխք անձնապահապետք յամենայն լերինս շրջէին*]» (ՆՀԲ, հատ. 1, էջ 194)), որոնք, պատմական տևական հոլովույթում պահպանելով իմաստային նույն կառուցվածքը, խորհրդային շրջանի վկայություններում վերածվել են պատմաբառի, ձեռք բերել սակավադեպ՝ գրքային կիրառություն (հմմտ. «գ. ա. 1. անձնապահներու գլուխ: 2. իր անձին ճարը տեսնող» (ԱԲՀԼ, էջ 74), «պետ կամ գլուխ թիկնապահաց.... Ինքնին միայն զանձն պահպանօղ, կ[ա]մ միայն անձինն զգուշացեալ» (ԲԲՀԻ, էջ 125), «գ. ա. անձնապահներու գլուխը. իր անձին ճարը տեսնող» (ՆԲՀԼ, էջ 109), «ած. գ. 1. Անձնապահների՝ թիկնապահների պետ [*Թագաւորը նրան նշանակեց իրան անձնապահապետ*]: *2. Ինքն իւր գլուխը պահող, իւր անձին զգուշացող» (ՀԲԲ, էջ 147), «գ. ա. (հնց.) Անձնապահների՝ թիկնապահների պետ, թիկնազորի պետ [*Մեզ ծանոթ անձնապահապետը.... եղավ սանդուղներեն վեր* (Ծ)]» (ԺՀԼԲԲ, էջ 116), «գ. (պատմ.) Անձնապահների պետ» (ԱՀԲԲ, էջ 70)):

քաղաքական գործի չի խառնվում, անձնապահ է մնում: 2. ած., գ. Պահպանող (թագաւորի) անձի, թիկնապահ: *Անձնապահների գունդ: Անձնապահի պաշտօն* (ՀԲԲ, էջ 147)), իսկ «թիկնապահը»՝ դիտվել որպես *հնացած*՝ մղվելով ծայրամաս (հմմտ. «ա. 1. Գլուխ պահող, խիստ զգույշ: 2. (հնց.) Թիկնապահ» (ԺՀԼԲԲ, էջ 116), «ած. 1. Ինքն իրեն պահող՝ պահպանող, զգուշավոր: 2. ած., գ. Պահպանող, թիկնապահ» (ԱՀԲԲ, էջ 69)):

- Իսկ նախախորհրդային և խորհրդային, ինչպես նաև անկախության շրջանի արևմտահայ վկայությունները, ինչպես նախորդիվ նշեցինք, գրեթե պահպանել են բառույթի հինհայերենյան իմաստային կառուցվածքը (հմմտ. «գ. (թագաւորի) թիկնապահ» (ԲԳՀԼ, էջ 150), նաև՝ «ած. 1. մարդ, որ կը պահպանէ իր տէրը՝ միշտ անոր թիկունքը կենալով. 2. թիկնապահ, գլխապահ, փշտիպան. 3. իր անձը պահող, զգուշաւոր: Հկնշ. 1. տիրապաշտ. 2. անձնապաշտ, անզգոյշ» (ՀՆԲ, էջ 117). տե՛ս և հմմտ. նաև ՀԱԼԼԲ[15], հատ. 1, էջ 300, ԱԱՆԲ[16], էջ 29, ՆԲՀԼ, էջ 109)[17]:
- Բարբառներում իրացրել է նաև ածականի արժեքով «ձեռնպահ, վերապահ, ետսակաց» իմաստույթները (հմմտ. ՀԼՀԲ, 1967, էջ 57):

3. ՀԱՄ(Ա)ՀԱՐԶ

- Հին հայերենում հանդես է եկել փոխառյալ *համահարզ/համհարզ* բաղադրական տարբերակներով (հմմտ. «**ՀԱՄՀԱՐԶ** (*համահարզ*, սխալմամբ՝ *համհարց*), «թիկնապահ»: Փոխառություն իրանական աղբյուրից. հմմտ. մ.պ. hamharz....»[18])՝

15 **Պետրոս վարդ. Ճիզմէճեան**, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան (այսուհետ՝ ՀԱԼԼԲ), Հալէպ, Տպարան «Անի», 1954:

16 **Սարապետոյեան Ռ. Կ.**, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան (այսուհետ՝ ԱԱՆԲ), Եր., «Տիգրան Մեծ», 2011:

17 Խորհրդային շրջանում *անձնապահ-* սերող հիմքով վկայվել են *թիկնապահ*-ին հոմանիշ նոր՝ **անձնապահապան** բաղադրությունը, որը համագործածական չի դարձել (հմմտ. «տե՛ս Թիկնապահ [*Դրանք մի շեւակ նոքարներ էին կամ անձնապահապաններ (ՎՓ)*]» (ԺՀԼԲԲ, հատ. 1, էջ 116), «գ. (գրք.) Անձնական պահապան, տիրոջ կամ պետի անվտանգությունը պաշտպանող անձ, թիկնապահ» (ԱՀԲԲ, էջ 69)), և **անձնապահպանություն** բաղադրությունը՝ «ինքնապաշտպանություն» իմաստույթով:

18 **Աճառեան Հ.**, Հայերէն արմատական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ), հատ. 3, Եր., Երեւանի համալսարանի հրատ., 1926, էջ 27, հմմտ. նաև համառոտմամբ՝ **Մինասեան**

իրանյան «համապատիվ, երկրակից» բառույթների իմաստային համաբանությամբ իրացնելով գոյականի արժեքով «նիզակակից» միջուկային իմաստույթը (հմմտ. «գ. (թերևս իբր համահարազատ. կամ պրս. *հեմերզ*, համապատիվ, և երկրակից) Վարի որպէս Նիզակակից. մտերիմ պաշտպան. արբանեակ. թիկնապահ. Համահարզ երկոցունց.... [*Ջեղբայր թագաւորին լինաց, և զբազում համհարզս նորին ընդ նմին սապակէր. Եղիշ.*]» (ՆՀԲ, հատ. 2, էջ 16), տե՛ս նաև՝ «գ. նիզակակից, օգնական, պաշտպան, թիկնապահ. տ[ե՛ս] էթպարէ, եւլտաշ, նարտըմ ճը» (ԱԲՀԼ, էջ 463)), որը նույն շրջանի մեկ այլ վկայությամբ ճշգրտվել է «իշխանավորի նիզակակից» իմաստույթով[19] (հմմտ. «գ. նիզակակից իշխանաւորաց՝ արքայից՝ զօրավարաց» (ԲԲՀԻ, էջ 821)):

- Խորհրդային շրջանի վկայություններում բառույթը տրված է *մեռած* նշումով (հմմտ. «(մեռ.) (պահլ. hamharz, թիկնապահ), գ. Կռուի ժամանակ միասին՝ կողք կողքի կռուող, նիզակակից, զօրագլխի օգնական կռուի մէջ» (ՀԲԲ, հատ. 3, էջ 34))[20]: Մեկ այլ դեպքում, պահպանելով հինհայերենյան միջուկային իմաստույթը, ծայրամասայինում տերմինացվել է (հմմտ. «ա., գ. 1. Նիզակակից, թիկնապահ: 2. (ռազմ.) Հրամանատարի ձեռքի տակ գտնվող օգնական սպա՝ պաշտոնական հանձնարարություններ կատարելու համար» (ԺՀԼԲԲ, հատ. 3, էջ 278)), իսկ

Մ., Հայերէն ստուգաբանական առձեռն բառարան (այսուհետ՝ ՀՍԱԲ), Ժնեւ, 2004, էջ 443:

19 Ի դեպ, *նիզակակից* բառույթը հին հայերենում հանդես է եկել ածականի արժեքով (տե՛ս և հմմտ. ՆՀԲ, հատ. 2, էջ 425)՝ ձևավորելով «պատերազմակից, մարտակից, զինուորակից, զինակից» հոմանիշային շարքը (հմմտ. ԳՀԲ, էջ 530):

20 Համոզված ենք, որ Մալխասյանցը ձեռքի տակ ունեցել է Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանը», որը վերջինս կազմել էր նորաստեղծ Խորհրդային Հայաստանի կառավարության պատվերով: Աբեղյանը ռուսերենի **адъютант** բառի հայերեն համարժեք ընտրել է **համհարզ**-ը՝ հիմք ընդունելով բառույթի հինհայերենյան «օգնական» իմաստույթը (հմմտ. адъютант < գերմ. Adjutant < լատ. adjutans (adjutantis) «օգնող, օգնական»): Բառարանում ներկայացված՝ *համհարզ* գերադաս անդամով կազմված բազում կայուն ռազմագիտական կապակցություններից կարելի է ենթադրել, որ բառույթը տերմինացվել է (հմմտ. «գումարտակի (баталионный) ≈, բրիգադի (бригадный) ≈, պարետի (комендатский) ≈, կայազորի պետի (начальника горнизона) ≈, գնդի (полковой) ≈, ավագ (старший) համհարզ» (ՌՀՌԲ, էջ 9-10)): Աբեղյանի **համհարզ**-ն արդեն զինվորական պաշտոն էր՝ ոչ անմիջականորեն անձը պահպանող/պաշտպանողի, ուստի բառույթի «թիկնապահ» ընդհանրական իմաստույթը Մալխասյանցը դասել է *մեռած* բառերի շարքը:

վերջին վկայությունում ծայրամասային տերմինը վերածվել է միջուկայինի՝ չեզոքացնելով «*նիզակակից-թիկնապահ*» հինհայերենյան իմաստույթը, նշանակելով արդեն զինվորական պաշտոն (հմմտ. «գ. 1. Զինվորական պետի տրամադրության տակ գտնվող սպա՝ պաշտոնական հանձնարարություններ և շտաբային գործեր կատարելու համար: 2. Կռվի ժամանակ միասին՝ կողք կողքի կռվող, նիզակակից» (ԱՀԲԲ, հատ. 1, էջ 808, տե՛ս և հմմտ. նաև ՕԲԲ[21], էջ 19, ՀԼՀԲԲ, էջ 580)): Այս շրջանում *համհարզ-* սերող հիմքով դիտվել են նոր բաղադրություններ՝ *համհարզային, համհարզություն* (հմմտ. ԺՀԼԲԲ, հատ. 3, էջ 278, ԱՀԲԲ, հատ. 1, էջ 808): Բառույթն այսօր, անշուշտ, *պասիվաբառ* է[22]:

---

21 **Հայրապետյան Ա.**, Օտար բառերի բառարան (այսուհետ՝ ՕԲԲ), Եր., Հեղինակային հրատ., 2011:

22 Մեր ուսումնասիրության ընթացքում հայտնաբերեցինք «*անձը պահպանել/ պաշտպանել*» բառաիմաստային ենթաբազմությունում գործառող, բառարաններում սակավ վկայաբերված նաև փոխառյալ բառույթներ, ինչպես՝ պարսկերենից՝ **գավազ**, **ջանդար**, **փուշտիպան**, եբրայերենից՝ **քռոին**, որոնք, բացի **փուշտիպան**-ից, հին հայերենում չեն վկայվել: Միջինհայերենյան վկայություն ունի միայն **ջանդար**-ը (հմմտ. «(պրսկ. ĵan-dar), գ. Թիկնապահ, զինակիր [*Էր ջանդար առաջի Նուրադնին՝ և էր համոյ յաչս նորա* (ՍԱ, 137)]» (ՄՀԲ, էջ 668)): Աշխարհաբարի արևելահայ և արևմտահայ հատվածներում տպագրված բառարանների գերակշռող մասը **գավազ**-ը վկայաբերում է «*բազեի ձագ*» միակ՝ միջուկային իմաստույթով (հմմտ. ՀՍԱԲ, էջ 57, ՀՆԲ, էջ 371, ՀԼՆԲ, էջ 87, ՀԱԼԼԲ, հատ. 2, էջ 24, ՀԲԲ, հատ. 1, էջ 416, ՆԲՀԼ, էջ 307, ԲԳՀԼ, էջ 79 և այլն). համանուն ձևը թերևս առաջացել է փոխանվանական հիմքով *գավազանակիր* բաղադրության համառոտմամբ (հմմտ. «3. գ. (եկեղ.) Հոգևորական, որ որոշ հանդեսների ժամանակ հայրապետի մոտ կանգնած՝ բռնում է նրա գավազանը» (ԱՀԲԲ, հատ. 1, էջ 221))՝ արտահայտելով «բարձրաստիճան հոգևորականներին, պաշտոնյաներին ուղեկցող, թիկնապահ» իմաստույթը (հմմտ. «[*Դրանք մի տեսակ նոքարներ էին կամ անձնապահապաններ, որոնց կոչում էին գավազ (ՎՓ)*]» (ԺՀԼԲԲ, էջ 373, տե՛ս նաև ԱՀԲԲ, էջ 221, ՀԼՀԲԲ, էջ 184)): **Ջանդար**-ը փոխատու լեզվում իրացրել է «թիկնապահ» գերիմաստույթը («(պարսկ. ǵăndăr, «անձնապահ, զինակիր»), գ. Զինակիր» (ՀԲԲ, հատ. 4, էջ 135, հմմտ. նաև ՀՍԱԲ, էջ 239), տե՛ս և հմմտ. նաև՝ «**Զինակիր**, գ. (ռազմ.) 1. Ջանդար (ավագ զինվորականի զենքերը կրող)» (ՀԼՀԲԲ, էջ 302)): **Փուշտիպան**-ի՝ հայերեն *թիկնապահ* բաղադրությունը մեկնել է Հ. Աճառյանը (հմմտ. «pušt = սանս. pršta «կռնակ, թիկն»+pān «պահապան» բառերից.... Նոյն բառի հին արշակունեան ձևից է հյ. **պաշտպան**....» (ՀԱԲ, հատ. 4, էջ 525)), որը հին հայերենում հանդես է եկել բաղադրական երկու տարբերակով (*փուշտիպան/փշտիպան*)՝ «թիկնապահ» միջուկային իմաստույթով (հմմտ. «ա. գ. (իբր Կշտապան, թիկնատու) Թիկնապահ. անձնապահապետ. մարմնապահ. նեցուկ. Օգնական. նիզակակից. զօրական ի զօրավիգն պատերազմի. [**Պահէին զնոսա արձակ ի մէջ փուշտիպան զօրացն*]» (ՆՀԲ, հատ. 2, էջ 959)): Նույն շրջանի այլ վկայություններում «նեցուկ. օգնական. նիզակակից» ծայրամասային իմաստները չեզոքացվել են (հմմտ. «ա. գ. թիկնապահ, զօրագլխին քով կեցող զինուոր» (ԱԲՀԼ, էջ 816, տե՛ս նաև

4. ԳԼԽԱՊԱՀ

- Հին հայերենում իրացրել է ածական-գոյականի արժեքով «գլխավոր անձի պահապան» (հմմտ. «ա. Պահապան կարգեալ գլխոյ. թիկնապահ. անձնապահապետ. [*Գլխապահ լինի թագաւորին]» (ՆՀԲ, հատ. 1, էջ 560, ԱԲՀԼ, էջ 218)), նաև «թագավորի թիկնապահ, գլխավորին պահպանող զորք» միջուկային իմաստույթները (հմմտ. «գ. և ա. Թիկնապահ: – թագաւորին. զօրք Գլխապահք» (ԲԲՀԻ, էջ 363)): Նոր՝ խորհրդային շրջանի վկայություններում հինհայերենյան իմաստույթը դիտվել է հնացած (հմմտ. «(հնց.) Տ[ե՛ս]. Թիկնապահ, Անձնապահապետ» (ՀԲԲ, հատ. 1, էջ 444), «գ. 1. թագաւորի, վարչապետի անձը պահպանող զինուոր. 2. գլուխը պաշտպանող. 3. թիկնապահ» (ՀԱԼԼԲ, հատ. 2, էջ 71)): Ավելի ուշ շրջանում այն չեզոքացվել է, ձևավորվել է ածականի արժեքով «գլուխ պահող» միջուկային իմաստույթը, որը համագործածական կիրառություն չունի (հմմտ. «ած. 1. Գլուխ պահող, գործից խուսափող: 2. Գլուխը պահող, յոլա գնացող: 3. (հզվդ.): Առաջապահ» (ԱՀԲԲ, հատ. 1, էջ 243)):

5. ՄԱՐՄՆԱՊԱՀ, ՇՐՋԱՊԱՀ

- **Մարմնապահ**-ը հին հայերենում իրացրել է ածական-գոյականի արժեքով «մեծամեծների պահապան» իմաստույթը (հմմտ. «ա. գ. Պահապան մարմնոյ մեծամեծաց. անձնապահ.

ԲԲՀԻ, էջ 1447, ՆԲՀԼ, էջ 1345)): Խորհրդային շրջանի վկայություններում դիտվել է որպես մեռած, հնացած ձև (հմմտ. «(մեռ.) (պահլ. puštipān, պարսկ. puštibān), գ. Թիկնապահ զինուոր: Փուշտի պանաց սաղար կ[ա]մ փուշտիպան սաղար (պահլ. puštîkbān-sālar), փուշտիպանների պետ, թիկնապահների պետը, անձնապահապետ)» (ՀԲԲ, հատ. 4, էջ 522, տե՛ս նաև ԺՀԼԲԲ, հատ. 4, էջ 691, ԱՀԲԲ, հատ. 2, էջ 1543)): **Քոռին**-ը ևս հին հայերենում չի վկայվել: Ըստ Հ. Աճառյանի՝ ծագում է եբրայերենից, հունարենի միջոցով անցել է հայերենին՝ «թիկնապահների խումբ» միջուկային իմաստույթով, սակավադեպ կիրառությամբ (հմմտ. ՀԱԲ, հատ. 4, էջ 587, տե՛ս և հմմտ. նաև **Ջահուկյան Գ. Բ.**, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետ՝ ՀՍԲ), Եր., «Աստղիկ», 2010, էջ 786): Բառույթի մասին վկայության հանդիպում ենք միայն խորհրդային շրջանում՝ *հազվադեպ* նշումով (հմմտ. «*(եբր. kārī, յուն.-ից xorri), գ. Թիկնապահների խումբը» (ՀԲԲ, հատ. 4, էջ 584)), ինչպես նաև նույն շրջանի արևմտահայ մեկ բառարանում (հմմտ. ՀԱԼԼԲ, հատ. 2, էջ 1436):

թիկնապահ. արբանեակ[23]. [**Ոչ պալ դիոնիսի (բռնաւորի) մարմնապահս... ոչ պացուք թիկնապահս*]» (ՆՀԲ, հատ. 2, էջ

23 Բնիկ հնդեվրոպական բառ է՝ orbho- «որբ, երեխա, ծառա, սպասավոր» արմատից (հմմտ. ՀԱԲ, հատ. 1, էջ 299, տե՛ս նաև ՀՄԲ, էջ 86)։ Ուշագրավ է, որ «*անձը պահպանել/պաշտպանել*» բառաիմաստային ենթաբազմությունում գործառող հինհայերենյան բառաիմաստային տարբերակներում **արբանյակ**-ը հանդես է գալիս միայն *համհարզ* և *մարմնապահ* բառույթների իմաստային կառուցվածքներում։ Հին հայերենում բառույթն իրացրել է գոյականի արժեքով մեկ տասնյակից ավելի իմաստույթ՝ «պատանի սպասավոր» միջուկային իմաստույթով (հմմտ. «գ. Յարբունս հասեալ սպասաւոր ժիր. որ կոչի մանուկ, պատանեակ. համբակ. սպասեակ. ծառայ. Պաշտօնեայ. որպիսի և է սպասահարկու. գործօնեայ. գործակալ. գործակից. կամարար. Կամակատար. մատակարար. հպատակ. հետևօղ. առիթ. միջնորդ [*Զարբանեակս յառաջ քան զիշխանն նազելի և պարկեշտ համարին*]» (ՆՀԲ, հատ. 1, էջ 341, տե՛ս և հմմտ. նաև ԳՀԲ, էջ 111)), իսկ արդեն նույն շրջանի մեկ այլ վկայությամբ՝ հավելվել է «երկնային մարմին» աստղաբանական տերմինի արժեք ունեցող ծայրամասային իմաստույթը (հմմտ. «*Արբանեակք մոլորակաց. (են մանր աստեղք պարայածեալք զմոլորակօք.)» (ԲԲՀԻ, էջ 226)), որն Առձեռն բառարանում չեզոքացվել է, ընդհանրացել է նախորդ վկայության միջուկային իմաստույթը՝ փոխարինվելով «առհասարակ սպասավոր» իմաստույթով, իսկ ծայրամասային իմաստույթները զգալիորեն կրճատվել են (հմմտ. «գ. 1. սպասաւոր, ծառա, մանչ. 2. գործակից» (ԱԲՀԼ, էջ 131))։ Նախախորհրդային և խորհրդային շրջանների աշխարհաբարի արևմտահայ և արևելահայ վկայություններում «սպասավոր, կամակատար» իմաստույթները դարձել են միջուկային (հմմտ. ԲԳՀԼ, էջ 46, ՀԱԼԼԲ, հատ. 1, էջ 486, ՀԼՆԲ, էջ 41, ԱԲ (**Սարգսյան Ա. Ե.**, Արևմտահայերենի բառարան, Եր., «Արևիկ», 1991), էջ 44), ավելի ուշ հավելվել է «երկնային մարմին»-ը՝ որպես միջուկային իմաստույթ (հմմտ. ՆԲՀԼ, էջ 193, ՀՆԲ, հատ. 1, էջ 210, ԱԱՆԲ, էջ 44)։ Խորհրդային վաղ շրջանի վկայություններում «սպասավոր, ծառա, պաշտոնեայ» ծայրամասային իմաստույթները դիտվել են *հնացած*, իսկ «գործակից, գործակալ, կողմնակից» իմաստույթները՝ միջուկային (հմմտ. ՀԲԲ, հատ. 1, էջ 255), որոնք ավելի ուշ մղվել են ծայրամաս, ձեռք բերել գնահատողական բաղադրիչ՝ «կամակատար, կողմնակից, գործակալ» բացասական երանգավորմամբ, իսկ «երկնային մարմին»-ը վերածվել է միջուկայինի, կազմվել է *արհեստական արբանյակ* նոր տերմինային կապակցությունը (հմմտ. ԺՀԼԲԲ, հատ. 1, էջ 210, ԱՀԲԲ, հատ. 1, էջ 126)։ Հայերենի տարբեր գոյավիճակներում բառույթի իմաստային կառուցվածքում աստիճանավորման զգալի տեղաշարժեր են նկատվել միջուկային և ծայրամասային իմաստույթների միջև, որոնք տվել են իրենց ածանցյալները «անձ, մարդ» նշանակող բառաիմաստային դաշտի **այլ** բառաիմաստային ենթաբազմություններում և խմբերում։ Այսպես՝ հինհայերենյան իմաստային կառուցվածքի մաս կազմող բառույթները գործառում են հետևյալ բառաիմաստային խմբերում՝ ըստ «*գիտելիքների, հմտությունների, փորձի բացակայության*» (հմմտ. **համբակ**), «*կամազրկության, հնազանդության, կախվածության, երկչոտության, երեսառածության, լալկանության*» (հմմտ. **պատանյակ** (խսցկ. հեգն.)՝ *մամայի բալա* դարձվածային արտահայտության համաբանությամբ), «*աշխատանքի պայմանների, աշխատանքի վարձատրության բնույթի*» (հմմտ. **սպասյակ**, **ծառա**), «*պաշտոնեական, պաշտոնապար անձ համարվելու*» (հմմտ. **պաշտոնյա**), «*անվտանգության, հետախուզական, հսկողական, հետաքննական մարմիններում աշխատելու հանգամանքի*» (հմմտ. **գործակալ**), «*աշխատանքի, զբաղմունքի շրջանակների*» (հմմտ. **մատակարար**), «*քաղաքացիության, հպատակության, ընտրական իրավունքի նկատմամբ հարաբերության*» (հմմտ. **հպատակ**), «*որևէ ուսմունքի՝ տեսության՝ ուղղության կողմնակից լինելու*» (հմմտ. **հե-**

228, տե՛ս և հմմտ. նաև ԲԲՀԻ, էջ 960, ԱԲՀԼ, էջ 548, ՆԲՀԼ, էջ 908)), իսկ խորհրդային շրջանում հանդիպում է մեկ վկայություն՝ *մեռած* նշումով (հմմտ. «(մեռ.) ած. գ. Մէկի մարմինը՝ անձը պահպանող կ[ա]մ պաշտպանող, թիկնապահ» (ՀԲԲ, հատ. 3, էջ 281)):

- Իմաստային կառուցվածքի զարգացում չի ապրել նաև **շրջապահ**-ը՝ բացի գերազանցապես հինհայերենյան վկայություններից (հմմտ. «ա. Շուրջ պահող. թիկնապահ. [**Ոչ էր նորա բազմուի ընդոծնաց, ոչ զինուորաց շրջապահից հաւաքումն*]» (ՆՀԲ, հատ. 2, էջ 497), «ա. պահապան անձին» (ԱԲՀԼ, էջ 642), «պահապան, թիկնապահ» (ԲԲՀԻ, էջ 1113), «ած. գ. Մէկի անձը պահպանող, թիկնապահ» (ՀԲԲ, հատ. 3, էջ 545)):

Եզրակացություններ

Հայերենի «Անձ, մարդ» բառաիմաստային դաշտում գործառող «անձը պահպանել/պաշտպանել» բառաիմաստային ենթաբազմության բառույթների իմաստային կառուցվածքների զարգացման քննությունը ցույց տվեց, որ.

1. Հինհայերենյան շրջանը բավական հարուստ է եղել «անձը պահպանել/պաշտպանել» բառաիմաստային ենթաբազմության բառույթներով (հմմտ. *անձնապահ(-ապան), գլխապահ, թիկնապահ, համհարզ, մարմնապահ, շրջապահ, փուշփիպան*)՝ «**թիկնապահ**» միջուկային գերիմաստույթով, առավելապես ածական-գոյականի խոսքիմասային արժեքով:
2. Ենթաբազմության բոլոր բառույթները վկայվել են տակավին հին հայերենից՝ իրացնելով գերազանցապես ռազմական պայմաններում (նաև խաղաղ պայմաններում. հմմտ. *թիկնապահ*) «բարձրաստիճան անձին պահպանել/պաշտպանելու» միջուկային իմաստույթ: Ենթաբազմության բառույթների իմաստային կառուցվածքում աստիճանակարգային տեղաշարժերի (միջուկից ծայրամաս և հակառակը, միջուկային և ծայրամասային իմաստույթների չեզոքացում կամ հնացում, ծայրամասայինների քանակական աճ, փոխաբերացում, տերմինացում և

տևորդ), «*առևտրական, միջնորդական գործունեության վճարկ*» (հմմտ. **միջնորդ**) և այլն:

այլն) առումով առանձնանում են *թիկնապահ* և *համհարզ* բառույթները, որոնք պատմական տարբեր ժամանակաշրջաններում ածական-գոյականի արժեքով իրացրել են նաև ծայրամասային իմաստույթներ (հմմտ. «թիկունքի պաշտպանութեան զրահ՝ թիկնապանակ», «հետախուզության աշխատակից, որ մշտապես հետևում է մեկին», «պաշտպանող, մեկի պաշտպանությունն ապահովող», «նիզակակից» և այլն)։ Ենթաբազմության կազմում տարաժամանակյա կտրվածքով առավել «կենսունակը» *թիկնապահ* բառույթն է, որը, բացի «պաշտպան» ընդհանրական իմաստույթից, այսօր ձեռք է բերել նաև գնահատողական բաղադրիչ՝ ոճական նշույթավորմամբ իրացնելով «ընդհանրապես պետական բարձրաստիճան անձի կամ առավելապես հանրային ընկալմամբ մերժելի խավի՝ օլիգարխների թիկնազորի անդամ» միջուկային իմաստույթ՝ բացասական երանգավորմամբ։ Ենթաբազմության մյուս բառույթները (հմմտ. *անձնապահ(-ապան), գլխապահ, համհարզ, մարմնապահ, շրջապահ, փուշփիպան*) այսօր պատմաբառեր են. դիտվում են **հնացած** կամ **մեռած**։

3. Ենթաբազմության կազմում սակավադեպ կիրառությամբ գործառել են նաև պարսկերենից (հմմտ. *գավազ, ջանդար, փուշփիպան, համհարզ*) և եբրայերենից (հմմտ. *քորին*) փոխառյալ բառույթներ, որոնց մի մասը հին և միջին հայերեններում չեն վկայվել (հմմտ. *գավազ*, *ջանդար*, *քորին*)՝ բացի մեկից, որն ունի միջինհայերենյան վկայություն (հմմտ. *ջանդար*)։ Բոլոր փոխառյալ ձևերն էլ ունեն մեկ իմաստագործառական ընդհանրություն. բոլորն էլ «պահպանում/պաշտպանում են բարձրաստիճան աշխարհիկ անձին ռազմական պայմաններում»՝ բացի մեկից, որը «թիկնապահել է բարձրաստիճան հոգևոր անձին խաղաղ պայմաններում» (հմմտ. *գավազ*)։ Բառույթները հանդես են եկել առավելապես եզակի գոյականի արժեքով՝ բացի մեկից, որը գործառել է հավաքական հատկանիշով՝ «թիկնապահների խումբ» (հմմտ. *քորին*)։ Փոխառյալ բառույթներից *համհարզ*-ն է, որն ակտիվորեն գործառել է հին հայերենից՝ իրացնելով «*նիզակակից-թիկնապահ*» իմաստույթը, որն արդեն չեզոքացվել է աշխարհաբարի խորհրդային շրջանի առա-

ջին վկայություններում՝ գործառելով «խաղաղ պայմաններում պաշտոնական հանձնարարություններ կատարող սպա» ընդհանրական իմաստույթով, հանդես գալով ռուսերենից փոխառյալ բազում ռազմագիտական տերմինակապակցություններում (հմմտ. գումարտակի ≈, բրիգադի ≈, պարետի ≈, կայազորի պետի ≈, գնդի ≈, ավագ *համհարզ*), որոնք այսօր **պատմաբառեր** են:

4. Քննվող ենթաբազմությունում հինհայերենյան շրջանից իմաստային կառուցվածքի զարգացում չեն ապրել պատմաբառերի շերտ անցած ինչպես հայերեն (հմմտ. *մարմնապահ*, *շրջապահ*, *գլխապահ*, *անձնապահ*), այնպես էլ փոխառյալ բառույթները (հմմտ. *գավազ*, *ջանդար*, *փուշփիպան*, *քորին*). դրանց մի մասը՝ որպես սերող հիմք, հանդես է եկել տարբեր բաղադրություններում կա՛մ հինհայերենյան շրջանում (հմմտ. *անձնապահազոր, անձնապահապետ*), կա՛մ խորհրդային (հմմտ. *թիկնապահական, թիկն(-ապահ)ապետ, թիկնապահություն, թիկնապահել,* **թիկն**- սերող հիմքով՝ *թիկնազոր*(ք), *անձնապահապան, անձնապահպանություն, համհարզային, համհարզություն*), նաև բայական կայուն հարադրությամբ (հմմտ. *անձնապահ լինել*):

5. Հայերենի տարբեր գոյավիճակներում քննվող բառույթների իմաստային կառուցվածքում գործառող իմաստույթները հարաբերվում են «անձ, մարդ» նշանակող բառաիմաստային դաշտի **այլ** բառաիմաստային ենթաբազմություններում և խմբերում: Այսպես, *համհարզ* և *մարմնապահ* բառույթների հինհայերենյան իմաստային կառուցվածքների ծայրամասային իմաստույթ ***արբանյակ***-ի իմաստային կառուցվածքում գործառող իմաստույթները հանդես են գալիս նաև «անձ, մարդ» նշանակող հետևյալ բառաիմաստային խմբերում՝ ըստ «*գիտելիքների, հմտությունների, փորձի բացակայության*» (հմմտ. **համբակ**), «*կամազրկության, հնազանդության, կախվածության, երկչոտության, երեսառածության, լալկանության*» (հմմտ. **պատանյակ** (խսցկ. հեգն.)՝ *մամայի բալա* դարձվածային արտահայտության համաբանությամբ), «*աշխատանքի պայմանների, աշխատանքի վարձատրության բնույթի*» (հմմտ. **սպաս**-

յակ, **ծառա**), «*պաշտոնեական, պաշտոնապար անձ համարվելու*» (հմմտ. **պաշտոնյա**), «*անկախնդության, հետախուզական, հսկողական, հետաքննական մարմիններում աշխատելու հանգամանքի*» (հմմտ. **գործակալ**), «*աշխապանքի, զբաղմունքի շրջանակների*» (հմմտ. **մատակարար**), «*քաղաքացիության, հպատակության, ընտրական իրավունքի նկատմամբ հարաբերության*» (հմմտ. **հպատակ**), «*որևէ ուսմունքի՝ տեսության՝ ուղղության կողմնակից լինելու*» (հմմտ. **հետևորդ**), «*առևտրական, միջնորդական գործունեության տեսակի*» (հմմտ. **միջնորդ**): Կամ՝ ***թիկնապահ***՝ ըստ «*շահերի, գործունեության, սոցիալական վիճակի, ձևավորված հարաբերությունների ընդհանրության*» (հմմտ. **կամակատար**, **գործակից**), «*օգնություն, պաշտպանություն, օժանդակություն, թողտվություն հանդես բերելու*» (հմմտ. **պաշտպան)**, «*դատական մարմիններում, վարչաիրավական հասպատություններում ծառայելու*» (հմմտ. դատա**պաշտպան**), «*թիմային մարզական խաղերում որոշակի գործառույթի*» (հմմտ. (կիսա-)**պաշտպան**-հարձակվող) և այլն:

6. Այսպիսով, ինչպես մեր խոսքի սկզբում նշեցինք, լեզվի զարգացման տարբեր գոյավիճակներում փոփոխվում է ոչ թե բառաիմաստային *դաշտ-համակարգը*, այլ նրա ներսում առկա որոշ հատվածներ և հարաբերությունները դրանց միջև, որովհետև դաշտում գործառող ցանկացած ենթաբազմության, խմբի անդամ բազում իմաստային թելերով՝ հարաբերություններով, կապված է ողջ համակարգում գործառող մյուս անդամների հետ, իսկ վերջինիս ամեն մի փոփոխություն հանգեցնում է լեզվի բառային կազմի որակական տեղաշարժի:

Արտաշես Ռ. Մարտիրոսյան – հեղինակ է շուրջ 3 տասնյակ գիտական հոդվածների: Զբաղվում է բառային իմաստաբանության հարցերով: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է բառակազմությունը, բառային իմաստաբանությունը և թարգմանության տեսությունը:

Էլ. հասցե՝ artashesmartirosyan@yandex.ru

Summary

THE DEVELOPMENT OF LEXICO-SEMANTIC SUBSET “PROTECTION OF A PERSON” IN THE ARMENIAN LANGUAGE

Artashes R. Martirosyan
Candidate of Sciences in Philology

Keywords – semantic structure of a word, hierarchical changes, nuclear meaning, peripheral meaning, lexico-semantic subset, cognitive-semantic mechanism, qualitative shift of lexical composition, lexeme, lexicographic processing, language status.

The article refers to a relatively new, sometimes problematic area of linguistics - lexical semantics of the word, in particular, to the problem of semantic changes in the lexical composition of the language. For the first time, the lexicographic elaborations of the development of semantic structures of lexemes of the lexical subset "to safeguard/protect a person", operating in the lexico-semantic field "person, man", are subject to chronological order, starting from the ancient Armenian period to the present day. Cognitive-semantic mechanisms of changing the meaning of lexemes in this huge historical period, their relationship with other lexical groups are revealed. The studies of lexicographic processing of lexemes of the subset show that the ancient Armenian period was quite rich in lexemes "to safeguard/protect a person" both in Armenian (grabar) and in borrowed forms with the archiseme "bodyguard". The study showed that both Armenian and borrowed words subsets, historicisms did not develop their semantic structure from the ancient Armenian period, and some of them, as a generative basis, appeared in various compositions in both the ancient Armenian and the Soviet periods.

The study also revealed that semantemes functioning in the semantic structure of the studied lexemes at different stages of the development of the Armenian language are used in other semantic subsets and groups of the lexical field with the meaning "person, man" in different meanings (cf. BODYGUARD: "in accordance with interests, activities, social status, established community relations" (cf. henchman, accomplice), "to act as an aid, protection, assistance, concession" (cf. defender), "in the service of the judiciary, administrative and legal institutions" (cf. legal adviser/lawyer), "for a certain function in team sports games" (cf. (semi)defender-attacker), etc.).

Thus, in different forms of language development, it is not the lexical and semantic system of fields that changes, but individual sections within it, as well as the

relations between them, since a member of any subset or group functioning in the FIELD is connected with other members operating in the FIELD: the whole system has many semantic threads, and any change in the latter leads to a qualitative shift in the vocabulary of the language.

Резюме

РАЗВИТИЕ ЛЕКСИКО-СЕМАНТИЧЕСКОГО ПОДМНОЖЕСТВА «ЗАЩИТА/СОХРАННОСТЬ ПЕРСОНЫ» В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Арташес Р. Мартиросян

Кандидат филол. наук

Ключевые слова – семантическая структура слова, иерархические изменения, ядерное значение, периферийное значение, лексико-семантическое подмножество, когнитивно-семантический механизм, качественный сдвиг лексического состава, лексема, лексикографическая обработка, языковой статус.

В статье рассматривается тема, изучающая относительно новую, порой проблемную область лингвистики – лексическую семантику слова, в частности, проблему семантических изменений лексического состава языка. Впервые лексикографические разработки по развитию семантических структур лексем лексического подмножества «*охранять/защищать персону*», действующие в лексико-семантическом поле «лицо, человек», приведены в хронологический порядок, начиная с древнеармянского периода до наших дней. Выявлены когнитивно-семантические механизмы изменения значения лексем за этот огромный исторический период, их соотношение с другими лексическими группами. Исследования лексикографической обработки лексем подмножества показывают, что древнеармянский период был богат лексемами «охранять/защищать персону» как в армянском (грабаре), так и в заимствованных формах с архисемой «**телохранитель**». Наше исследование показало, что как армянские, так и заимствованные слова подмножества, историзмы не развили свою семантическую структуру в древнеармянский период, а некоторые из них, как порождающая основа, появились в различных композициях как в древнеармянский, так и в советский периоды.

Исследование также выявило, что семантемы, функционирующие в семантической структуре рассматриваемых лексем на разных этапах развития армянского языка, используются в других семантических подмножествах и группах лексического поля со значением «лицо, человек» в разных значениях (ср. **ТЕЛОХРАНИТЕЛЬ**: «в соответствии с интересами, деятельностью, общественным положением, сложившимися отношениями общности» (ср. *приспешник, соучастник*), «выступать в качестве помощи, защиты, содействия, уступки» (ср. *защитник*), «по службе в судебных органах, административно-правовых учреждениях» (ср. *юрисконсульт/адвокат*), «по определенной функции в командных спортивных играх» (ср. (полу)*защитник-нападающий*) и т.д.).

Таким образом, в разных формах языкового развития изменяется не только лексико-семантическая система полей, но и отдельные участки внутри нее, а также отношения между ними, поскольку член любого подмножества или группы, функционирующий в ПОЛЕ, связан с другими членами, действующими в ПОЛЕ: вся система многими смысловыми нитями, и всякое изменение последних ведет к качественному сдвигу в словарном запасе языка.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբեղյան Մ. Խ.**, Ռուս-հայերեն ռազմական բառարան, Ցեր., Կովկ. Կ. Բ. Ռազմա.-Հեղ. Խ.-ին կից Հայկ. Խմբագր. – Հրատ. Կոլլեգիա, 1925:
2. **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. 1, Եր., 1976:
3. **Աճառեան Հ. Հ.**, Հայերէն արմատական բառարան, հատ. 3, Եր., Երեւանի համալսարանի հրատ., 1926:
4. **Աճառյան Հ. Հ.**, Հայոց լեզվի պատմություն, հատ. 1, Ցեր., Պետական համալսարանի հրատ., 1940:
5. **Գաբամաճեան Ս.**, Նոր բառգիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, Տպագրութիւն Ռ. Սագայեան, 1910:
6. **Գայայեան Յովh. Թ.**, Բառարան գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, «Գալֆա», 1938:
7. **Գնել արք. Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան, Արտ. Տէր Խաչատուրեան**, Հայոց լեզուի նոր բառարան, հատ. 1, Պէյրութ, 1992:
8. Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969:
9. **Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիւրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836:
10. **Հայր Մանուէլ վարդապետ Ջախջախեան**, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1837:

11. **Հայր Մկրտիչ Աւգերեան, Հայր Գրիգոր Ճէլալեան**, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1865:
12. **Հայրապետյան Ա.**, Օտար բառերի բառարան, Եր., Հեղինակային հրատ., 2011:
13. **Ղազարեան Ռ. Ս.**, Գրաբարի հոմանիշների բառարան, Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 2006:
14. **Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.**, Միջին հայերենի բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2009:
15. **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, Եր., ՀՍՍՌ պետական հրատ., 1944:
16. **Մարտիրոսյան Ա. Ռ.**, Հայերենի ռազմագիտական տերմինաբանության ձևավորման պատմությունից, «Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ ռազմագիտական հանդես), Եր., 2001, N 1–2, էջ 173–176, N 3, էջ 86–92:
17. **Մինասեան Մ.**, Հայերէն ստուգաբանական առձեռն բառարան, Ժնեւ, 2004:
18. **Պետրոս վարդ. Ճիզմէճեան**, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Հալէպ, Տպարան «Անի», 1954:
19. **Ջահուկյան Գ. Բ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., «Ասողիկ», 2010:
20. **Սարգսյան Ա. Ե.**, Արևմտահայերենի բառարան, Եր., «Արևիկ», 1991:
21. **Սաքապետոյեան Ռ. Կ.**, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Եր., «Տիգրան Մեծ», 2011:
22. **Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967:
23. **Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2009:
24. **Տէր Խաչատուրեան Ա., Գանգրունի Հ., Տօնիկեան Փ.**, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, Կ. Տօնիկեան եւ որդիք հրատարակչատուն, 1968:

REFERENCES

1. **Abeghyan M. Kh.**, Ṛus-hayeren ṛazmakan baṛaran, Yer., 1925 **(In Armenian)**.
2. **Achaṛean H. H.**, Hayerēn armatakan baṛaran, hat. 3, Yer., Yerevani hamalsarani hrat., 1926 **(In Armenian)**.
3. **Achaṛyan H. H.**, Hayots‘ lezvi patmut‘yun, hat. 1, Yer., Petakan hamalsarani hrat., 1940 **(In Armenian)**.
4. **Aghayan Ē. B.**, Ardi hayereni bats‘atrakan baṛaran, hat. 1, Yer., 1976 **(In Armenian)**.
5. **Daghbashyan H.**, Liakatar baṛaran hayerenits‘ ṛuseren, T‘iflis, 1911 **(In Armenian)**.
6. **Gabamachean S.**, Nor baṛgirk‘ hayerēn lezui, K. Pōlis, Tpagrut‘iwn Ṛ. Sagayean, 1910 **(In Armenian)**.
7. **Gayayean Yovh. T‘.**, Baṛaran gandzaran hayerēn lezui, Gahirē, “Galfa”, 1938 **(In Armenian)**.
8. **Ghazarean Ṛ. S.**, Grabari homanishneri baṛaran, Ant‘ilias, Metsi Tann Kilikioy Kat‘oghikosut‘iwn, 2006 **(In Armenian)**.
9. **Ghazaryan Ṛ. S., Avetisyan H. M.**, Mijin hayereni baṛaran, Yer., YEPH hrat., 2009 **(In Armenian)**.

10. **Gnel ark‘. Chērēchean, P‘aramaz K. Tōnikean, Art. Tēr Khach‘aturean**, Hayots‘ lezui nor baṛaran, hat. 1, Pēyrut‘, 1992 **(In Armenian)**.
11. H. Achaṛyani anvan lezvi institut, Zhamanakakits‘ hayots‘ lezvi bats‘atrakan baṛaran, Yer., HSSH GA hrat., 1969 **(In Armenian)**.
12. **Hayr Gabriēl Avetik‘ean, Hayr Khach‘atur Siwrmēlean, Hayr Mkrtich‘ Awgerean**, Nor baṛgirk‘ haykazean lezui, Venetik, Tparan i Srboyn Ghazaru, 1836 **(In Armenian)**.
13. **Hayr Manuēl vardapet Jakhjakhean**, Baṛgirk‘ i barbaṛ hay yew italakan, Venetik, Tparan i Srboyn Ghazaru, 1837 **(In Armenian)**.
14. **Hayr Mkrtich‘ Awgerean**, **Hayr Grigor Chēlalean**, Aṛdzeṛn baṛaran haykaznean lezui, Venetik, Surb Ghazar, 1865 **(In Armenian)**.
15. **Hayrapetyan A.**, Ōtar baṛeri baṛaran, Yer., Heghinakayin hrat., 2011 **(In Armenian)**.
16. **Jahukyan G. B.**, Hayeren stugabanakan baṛaran, Yer., “Astghik”, 2010 **(In Armenian)**.
17. **Malkhaseants‘ St.**, Hayerēn bats‘atrakan baṛaran, Yer., HSSṚ petakan hrat., 1944 **(In Armenian)**.
18. **Minasean M.**, Hayerēn stugabanakan aṛdzeṛn baṛaran, Zhnew, 2004 **(In Armenian)**.
19. **Petros vard. Chizmēchean**, Hayerēn ashkharhabar lezui liakatar baṛaran, hat. 1, Halēp, Tparan “Ani”, 1954 **(In Armenian)**.
20. **Sak‘apetoyean Ṛ. K.**, Arewmtahayerēn-arewelahayerēn nor baṛaran, Yer., “Tigran Mets”, 2011 **(In Armenian)**.
21. **Sargsyan A. Ye.**, Arevmtahayereni baṛaran, Yer., “Arevik”, 1991 **(In Armenian)**.
22. **Suk‘iasyan A. M.**, Hayots‘ lezvi homanishneri baṛaran, Yer., HSSH GA hrat., 1967 **(In Armenian)**.
23. **Suk‘iasyan A. M.**, Hayots‘ lezvi homanishneri bats‘atrakan baṛaran, Yer., YEPH hrat., 2009 **(In Armenian)**.
24. **Tēr Khach‘aturean A., Gangruni H., Tōnikean P‘.**, Hayots‘ lezui nor baṛaran, Pēyrut‘, K. Tōnikean yew vordik‘ hratarakch‘atun, 1968 **(In Armenian)**.